Հայաստանյան բանկերի վարկավորման շրջանակների ծրագիր II, համալրում III

Երկիր. Հայաստան	
Ծրագրի համար.	42716
Գործունեության ոլորտ.	Բանկերի վարկավորում
Հանրային/Մասնավոր	Մասնավոր
Բնապահպանական դաս.	Ֆինանսական հաստատություններ
Հանձնաժողովի նիստի ամսաթիվը.	մայիսի 4, 2011թ.
Կարգավիճակ.	Հաստատվել է հանձնաժողովի կողմից

Ծրագրի ամփոփագիրն հրապարակվել է. մարտի 25, 2011թ.

Ծրագրի նկարագիր

Հայաստանյան բանկերի վարկավորման շրջանակների ծրագիր II-ը (AMBFF II), որը հիմնադրվել է Հայաստանի առևտրային բանկերին և ոչ-բանկային ֆինանսական հաստատություններին վարկեր տրամադրելու և կապիտալում ներդրումներ կատարելու նպատակով, նախ հաստատվել է 2006թ.՝ 40 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով: Հաջողությամբ պսակվելով՝ այն համալրվել է երկու անգամ՝ 80 մլն ԱՄՆ դոլարի չափով 2007թ. նոյեմբերին և լրացուցիչ՝ 100 մլն ԱՄՆ դոլարի չափով 2009թ. դեկտեմբերին: Միջոցները օգտագործվել են 14 գործընկեր-հաստատությունների տրամադրված ավելի քան 25 վարկերում:

ԿՁԵԲ-ը այժմ դիտարկում է հետագա՝ 100 մլն ԱՄՆ դոլարի համալրում Հայաստանյան բանկերի վարկավորման շրջանակների ծրագիր II-ին՝ Հայաստանի բանկային ոլորտի զարգացմանը և ֆինանսական ճգնաժամից վերականգնմանը նպաստելու նպատակով: Ծրագիրն ուղղվելու է ֆինանսական հաստատությունների համար նոր պրոդուկտների զարգացմանը, տեղական արժույթով վարկավորման զարգացմանը և սինդիկացիոն գործընկերների ներգրավմանը: Ըստ անհրաժեշտության, գործարքները զուգակցվելու են Տեխնիկական աջակցությամբ:

Անցումային շրջանի վրա ազդեցությունը

Անցումային շրջանի վրա Ծրագիր II-ի երրորդ համալրման ակնկալվող ազդեցությունը դրսևորվելու է շուկայի հետագա ընդլայնմամբ, որն իրականացվելու է ընտրված գործընկեր բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորում տրամադրելով՝ կոնկրետ ոլորտներում և կոնկրետ նպատակների միտված (օրինակ, գյուղատնտեսություն) նրանց վարկավորման հնարավորությունները, նաև տնտեսապես ավելի թերզարգացած տարածաշրջաններում, արագացնելու և ընդլայնելու համար: Կախված շուկայի պայմաններից, Բանկը փորձելու է մեծացնել այս գործարքների ծավալը՝ տեղական արժույթով վարկերի և/կամ սինդիկացված գործիքների միջոցով:

Առաջարկված համալրումը նաև Հայաստանի ֆինանսական հաստատություններում Բանկի ներգրավվածության կարևոր շարունակություն է, այն կայունացնելու և ամրապնդելու է անցումային շրջանի ազդեցությունը, որն առ այսօր ապահովվել է Ծրագրերի գործարկման միջոցով: Գործարքները զուգակցվելու են Տեխնիկական աջակցությամբ, ըստ անհրաժեշտության:

Հաճախորդը

Հայաստանյան բանկերի վարկավորման շրջանակների ծրագիր II-ի ներքո առկա Գործընկեր Բանկերը և նոր գործընկեր ֆինանսական միջնորդները, ներառյալ բանկերը և այլ ֆինանսական հաստատությունները (ՖՀ):

ՎԶԵԲ-ի ֆինանսավորում

100 մլն ԱՄՆ դոլար:

Բանկը պետք է կնքի առանձին վարկային և կապիտալ ներդրման համաձայնագրեր առկա և նոր գործընկեր-ՖՀ-ների հետ, իսկ գումարները պետք է որոշվեն ըստ յուրաքանչյուր դեպքի:

Ծրագրի արժեքը

Չի նշվում

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը

Մասնակից բանկերը իրականացնելու են իրենց՝ ենթավարկավորման գործունեությունը ՎՁԵԲ-ի՝ Իրագործման պահանջների. Աշխատանքի և աշխատանքային պայմաններ կետ 2-ի և ՎՁԵԲ-ի՝ Իրագործման պահանջների. Ֆինանսական միջնորդներ կետ 9 -ի համաձայն: Սա ենթադրում է գործող ազգային բնապահպանական, առողջապահական և անվտանգության օրենսդրության հետ համապատասխանությունը, Բնապահպանական բացառման ցուցակին հետամուտ լինելը, Իրագործման պահանջների կետ 1 և 9-ի իրագործման և ենթավարկավորմանը վերաբերող բնապահպանական և սոցիալական հարցերի շուրջ Տարեկան հաշվետվության ներկայացումը և բնապահպանական հարցերով զբաղվող աշխատակազմի ավագ անդամի նշանակումը:

Տեխնիկական համագործակցություն

Տարիների ընթացքում Ծրագիր II-ին օժանդակել են Տեխնիկական աջակցության բազմակողմանի փաթեթները, այդ թվում նաև Հայաստանի Միկրովարկավորման Ծրագրի միջոցով, որը ֆինանսավորվում է USAID-ի կողմից, Բանկի Վաղ անցումային երկրների Բազմադոնոր հիմնադրամի և Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից (1.86 մլն ԱՄՆ դոլար, որը համալրված է ևս 1.5 մլն եվրոյով), առաջին հիփոթեկային վարկային գծի համար Տեխնիկական աջակցության միջոցով (150,000 եվրո), որը ֆինանսավորված է Վաղ անցումային երկրների Բազմադոնոր հիմնադրամի կողմից, 0.9 մլն եվրո Վաղ անցումային երկրների Բազմադոնոր հիմնադրամի միջոցով և Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից՝ աջակցելու մասնակիցներին ըստ դեպք-առ-դեպք սկզբունքի՝ բարելավելու արդյունքների արդյունավետությունը և ներկայացնելու նոր պրոդուկտները, Փոքր և միջին ձեռնարկություններին Վարկային խորհրդատվության ծառայությունների և Ինստիտուցիոնալ կառուցման տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով, որը ֆինանսավորված է Վաղ անցումային երկրների Բազմադոնոր հիմնադրամի կողմից (350,000 եվրո, որը համալրված է լրացուցիչ 350,000 եվրոյով):

Վերը նշված Տեխնիկական աջակցությունը զգալի ազդեցություն է ունեցել ոլորտի զարգացման վրա՝ աջակցելով տեղական բանկերի ինստիտուցիոնալ կառուցմանը,

տրամադրելով “նոու-հաու” վարկերի գնահատման և կրեդիտների հաստատման գործընթացներում, ուժեղացնելով վարկային բաժինները և զարգացնելով և բարելավելով ներքին վարկային քաղաքականությունները և գործընթացները:

Հայաստանի Միկրովարկավորման Ծրագիրը ակտիվ և հասանելի է նոր ծրագրերի համար: Հետագա Տեխնիկական աջակցությունը կարելի է դիտարկել՝ առաջնորդվելով «ըստ անհրաժեշտության» սկզբունքով, որը հատուկ է նոր պրոդուկտների զարգացմանը, ինչպես օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում տրվող վարկերը կամ թերզարգացած հիփոթեկային վարկավորումը:

Բիզնես-հնարավորություններ

Բիզնես-հնարավորությունների կամ գնումների համար խնդրում ենք կապվել հաճախորդի ընկերության հետ:

Ընդհանուր տեղեկատվություն

ՎԶԵԲ-ի ծրագրերի վերաբերյալ և գնումներին չառնչվող տեղեկատվություն՝

Հեռ. +44 20 7338 7168; Ֆաքս. +44 20 7338 7380
էլ-փոստ. projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվության քաղաքականություն (ՀՏՔ)

ՀՏՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը տեղեկատվություն բացահայտում և խորհրդակցում իր շահագրգիռ կողմերի հետ՝ խթանելու ավելի լավ իրազեկություն և պատկերացում իր ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնության մասին:
ՀՏՔ-ի տեքստը

Ծրագրի վերաբերյալ Բողոքների Մեխանիզմ (ԾԲՄ)

ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրի վերաբերյալ բողոքների մեխանիզմը (ԾԲՄ), որը հնարավորություն է ընձեռում Բանկի ֆինանսավորած ծրագրերի ենթադրվող կամ հավանական վնասների վերաբերյալ անհատից, անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրության համար: ԾԲՄ-ը կառավարող Ընթացակարգի Կանոնները կարելի է գտնել այստեղ. www.ebrd.com/downloads/integrity/pcmrules.pdf, ռուսերեն տարբերակը՝ այստեղ. http://www.ebrd.com/downloads/integrity/pcmrulesr.pdf

ԾԲՄ-ի ներքո ստացած յուրաքանչյուր բողոք պետք է ներկայացվի ոչ ուշ, քան ՎԶԵԲ-ի ֆինանսավորման վերջին բաշխումից 12 ամիս անց: Աջակցության համար կարող եք դիմել ԾԲՄ-ի աշխատակցին (pcm@ebrd.com էլեկտրոնային հասցեով) կամ ՎԶԵԲ-ի համապատասխան տեղական գրասենյակ. եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացվի բողոքը:

Ծրագրի Ամփոփագրի փաստաթղթերը կազմվում են նախքան ՎԶԵԲ-ի Տնօրենների խորհրդի կողմից քննումը: Ծրագրի մանրամասները կարող են փոփոխվել Ծրագրի Ամփոփագրի փաստաթղթի հրապարակումից հետո: Ծրագրի Ամփոփագրի փաստաթղթերը չեն կարող դիտարկվել որպես ՎԶԵԲ-ի պաշտոնական քաղաքականությունը ներկայացնող նյութեր:

Վերջին անգամ նորացվել է 2011թ. մարտի 25-ին: